373 [illegible]

Զ-32

21005

[illegible]

1909

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ԲԵՍԱՐԱԲԻՈՅ ԹԵՄԱԿԱՆ
ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ

1906-7—1908-9

ՈՒՍ. ՏԱՐԻՆԵՐԻ

# ՀԱՇԻՒԸ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ. Տպարան Ս. Աւագեանի. | Нахичевань н.-Д. Типогр. С. Я. Авакова.

1909

2010

№ 194
370
2074-ՀԱ
373[Ն. Նախիջեւան]
Հ-39

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/Ⅱ. 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ԲԵՍԱՐԱԲԻՈՅ ԹԵՄԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ

## 1906-7—1908-9 ՈՒՍ. ՏԱՐԻՆԵՐԻ

# ՀԱՇԻՒԸ

1004
15358

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
„ՄՇԱԿ“
ԼՐԱԳՐԻ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ.
Տպարան Ս. Աւագեանի.

Нахичевань н.-Д.
Типогр. С. Я. [illegible]а.

1909

8199

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄՇԱԿ» ԼՐԱԳՐԻ

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ Թեմական Հոգևոր Դպրանոցի կանոնադրութեան 17-րդ յօդուածի ԻԱ. պարբերութեան համաձայն՝ Հոգաբարձութիւնս պարտք է համարում առանձին տպագրութեամբ ի լոյս ընծայել իւր երեքամեայ պաշտօնավարութեան համառօտ տեղեկագիրը, այն է՝ Դպրանոցի տնտեսական կառավարութեան հաշիւը, դրամական ելումուտքի պատկերը և ուսումնական ընթացքի տեղեկագիրը 1906-7, 1907-8 և 1908-9 ուսմ. տարիների մասին։

## ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆՍ ԿԱԶՄԸ.

Հաշուատուութեան երեքամեայ շրջանում Դպրանոցի Հոգաբարձութեան անդամներն էին՝ պ. պ. Զուբարեան Գէորգ, Շլթեան Գէորգ, Պալեան Յովհաննէս, Միրզոյեան Յակոբ, Ռէիզեան Գէորգ և Խոճայեան Կարապետ, որոնք իրենց պաշտօնի մէջ հաստատուած են հոգելոյս տ. տ. Մկրտիչ կաթողիկոսի սրբատառ կոնդակով 1906 թ. սեպտ. 9-ին։ Հոգաբարձուներից պ. Գ Շլթեանը, որ նախկին կազմի ժամանակ վարում էր Դպրանոցի գանձապահի պաշտօնը, շարունակեց վարել նոյն պաշտօնը մինչև նոր գանձապահ պ. Գ. Ռէիզեանի ընտրութիւնը, որ տեղի ունեցաւ 1906 թ. սեպտ. 21-ին։ Գ. Ռէիզեանը գանձապահի պաշտօնը վարեց մինչև 1908 թ. Ապրիլի 21-ը, ապա, նորա հրաժարուելու պատճառով, գանձապահի պաշտօնը վարեց Հոգաբ. փոխ-նախագահ բարձ. Տ. Մուշէ վարդապետը ժամանակաւորապէս, մինչև 1908 թ. Սեպտ. 25-ը, երբ գանձապահի պաշտօնը յանձնուեցաւ պ. Յովհ. Շլթեանին, որ և մինչև օրս վարում է նոյն պաշտօնը։

Հոգաբարձութեանս կազմի մէջ այս երեքամեայ շրջանում հետևեալ փոփոխութիւնները տեղի ունեցան։

1907 թ. մարտի 10-ին պ. Գէորգ Շլթեանը հրաժարուեցաւ Հոգ. անդամի կոչումից, ուստի և, կանոնադրութեան 15-րդ յօդուածի համաձայն, պաշտօնավարելու հրաւիրուեցաւ առաջին թեկնածու պ. Աբգար Դերիջանեանը, որին յանձնուեցաւ նաև Դպրանոցի դատաստանական գործերի վարումը։

1908 թ. Սեպտ. 10-ին Հոգ. անդամի կոչումից հրաժարուեցաւ պ. Յովհաննէս Պալեանը անձնական տկարութեան պատճառով և նորա տեղը հրաւիրուեցաւ երկրորդ թեկնածու պ. Յովհաննէս Շլթեանը։

Որովհետև Դպրանոցիս, իբրև գիշերօթիկ դպրոցի, տնտեսական կառավարութիւնը առանձին հոգածութեան և մշտական հսկողութեան կարիք ունի և անկարելի է այդ

գործի ամբողջ ծանրութիւնը Հոգաբարձութեանս գանձապահ անդամի վրայ բառնալ, ուստի և պ. պ. Խոճայեանի, Միրզոյեանի, գանձապահ-հոգաբարձուի և տեսչի անդամութեամբ կազմուած է մի տնտեսական խորհուրդ, որը և վարում է Դպրանոցիս տնտեսական կառավարութեան վերաբերեալ ամէն ճիւղերը։ Բացի այդ՝ Դպրանոցս ունի նաև յատուկ տնտես, որը հոգում է առօրեայ ամէն տեսակ մանր ծախսերը՝ համաձայն անտեսական խորհրդի կամ գանձապահի ցուցմունքներին և կարգադրութիւններին։

Հաշուատուութեան երեքամեայ ընթացքում Հոգաբարձութեանս խորհրդարանը՝ առաջնորդական փոխանորդ բարձր. Տ. Մուշէ վարդապետի նախագահութեամբ՝ ունեցել է 53 նիստ և զբաղուել է Դպրանոցի բարեկարգութեան, առաջադիմութեան և նիւթական ապահովութեան վերաբերեալ այն ամէն խնդիրներով, որոնք, Դպրանոցի կանոնադրութեան համաձայն, վերապահուած են Հոգաբարձական մարմնի իրաւասութեանը և, որպէս զի հայ հասարակութիւնը կարող լինի գէթ հարևանցօրէն ծանօթութիւն ունենալ խորհրդարանիս պարապմանց առարկաներին՝ Հոգաբարձութիւնս պարտք է համարում դոցանից էականները արձանագրել այստեղ։

## ՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՍՈՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Բ ա ր ձ ր ա գ ո յ ն կամքով հաստատուած դպրանոցական հիմնական կանոնների 2-րդ յօդուածով սահմանուած են եկամուտի այն ամէն աղբիւրները, որոնցմով պիտի պահպանուի ու կառավարուի մեր Թեմական դպրանոցը։ Յիշեալ յօդուածը խմբագրուած է այսպէս. «Դպրանոցս կառավարի՝ ա. արդեամբք եկեղեցեաց Հայոց վիճակին Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ. բ. արդեամբ դպրանոցապատկան տան Խալիբեան ուսումնարանի, որ 'ի Թէոդոսիա, և այլոց կալուածոց. գ. կամաւոր նուիրանօք յօգուտ դպրանոցին»։

Դպրանոցի կանոնադրութեան վերոյիշեալ 2-րդ յօդուածի համաձայն, երջանկայիշատակ տ. տ. Գէորգ Դ. Կաթողիկոսն ամենայն Հայոց՝ կազմել տալով վիճակիս այն եկեղեցիների ցուցակը, որոնք պէտք է նպաստամատոյց լինեն Դպրանոցիս պահպանութեանը, 1881 թ. յուլիսի 24-ին արձակած, թ. 272 սրբատառ կոնդակով բարեհաճել է հաստատել նոյն ցուցակը 'ի գործադրութիւն, միաժամանակ որոշելով նաև իւրաքանչիւր եկեղեցւոյ տալու տարեկան օժանդակութեան գումարը։

'Ի կատարումն Հայրապետական այս բարեհաճ կարգադրութեան, ժամանակի Թեմական առաջնորդը, նոյն 1881 թ. օգոստոսի 17-ին, թ. 146 առաջադրութեամբ, պատուիրած է վիճակային ատեանին հրամանագրել «ստորագրեալ զմին բարեջան երեսփոխանաց եկեղեցեաց Հայոց վիճակիս, զի փոյթ կալցին անպատճառ ց 15 սեպտեմբերի իւրաքանչիւր ամի անխափան հասուցանել 'ի հոգաբարձական խորհրդարան Թեմ. Հոգ. Դպրանոցի վիճակիս 'ի Նոր Նախիջևան քաղաք, իւրաքանչիւրն զյատկացեալ յեկեղեցւոյ 'ի տեսչութեան իւրում եղելոյ զգումարն յօժանդակութիւն տարեւորական ծախուց Դպրանոցին առանց որևէ պատճառաբանութեանց»։

Հայրապետական կոնդակով հաստատուած նպաստամատոյց եկեղեցեաց ցուցակի մէջ մտած են 38 անուն եկեղեցի, որոնց ամէնքի տալու տուրքի գումարն է 4130 ռ. տարեկան. այս գումարից 1000 ռուբ. դրուած է Ս. Պետերբուրգի և Մոսկուայի եկեղեցիների վրայ։



Ժամանակի ընթացքում սակայն նպաստամատոյց 38 անուն եկեղեցիներից շատերը դադարել են սահմանուած նպաստները տալուց և ներկայումս Դպրանոցի պահպանութեան մասնակցում են միայն 15 եկեղեցի, որոնցից 12-ը՝ Նախիջևանի և գիւղերի եկեղեցիներն են, 1-ը՝ Նախիջևանի Ս. Խաչ վանքը, 1-ը՝ Ս. Պետերբուրգի և 1-ը՝ Մոսկուայի եկեղեցին։

Սկզբնական ցուցակի մէջ եղած և ժամանակի ընթացքում նպաստները կարճած եկեղեցիներն են.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1. | Քիշնևի Ս. Աստուածածին եկեղեցին | | 25 | ռուբլի | |
| 2. | Ագքերմանի » » | | 100 | » | |
| 3. | Օրհէյի » » | | 10 | » | |
| 4. | Իսմայիլի » » | | 10 | » | |
| 5. | Հօթինի Ս. Յովհաննու Մկրտչի եկ. | | 10 | » | |
| 6. | Հնչեշտի Ս. Աստուածածին եկեղեցին | | 50 | » | |
| 7. | Օդեսսայի Ս. Լուսաւորիչ | » | 50 | » | |
| 8. | Գրիգորիուպօլի Ս. Պետրոս-Պօղոսի | | 40 | » | |
| 9. | » Ս. Աստուածածին | | 35 | » | |
| 10. | Խարասուբազարի Ս. Փրկիչ վանքը | | 100 | » | |
| 11. | » Ս. Ածածին եկեղեց. | | 50 | » | |
| 12. | Սիմֆերոպօլի » | » | 100 | » | |
| 13. | Հին Խրիմի » | » | 35 | » | |
| 14. | Օրբազարի » | » | 25 | » | |
| 15. | Նողայսկի » | » | 10 | » | |
| 16. | Բահչեսարայի » | » | 10 | » | |
| 17. | Եւպատորիայի Ս. Նիկողայոս | » | 10 | » | |
| 18. | Թէոդոսիայի Ս. Հրեշտակապետաց | » | 15 | » | |
| 19. | » Ս. Գէորգ | » | 10 | » | |
| 20. | » Ս. Յովակիմայ Աննայի | » | 10 | » | |
| 21. | Մելիտոպօլի Ս. Ածածին | » | 10 | » | |
| 22. | Կերչի Ս. Հրեշտակապետաց | » | 10 | » | |
| 23. | Հին Խրիմի Ս. Խաչ վանքը | » | 100 | » | 825 ռուբ. |

Ինչպէս վերը յիշատակուեցաւ, Մոսկուայի եկ. խորհրդի վրայ տուրք դրուած էր տարեկան 250 ռուբլի, որ և անխափան ստացվում էր մինչև օրս։ 1909 թ. Մարտի 17, թ. 86 գրութեամբ Սրբազան Առաջնորդը հաղորդում է, որ Մոսկուայի եկ. խորհուրդը որոշել է 1909—10 ուս. տարուանից Դպրանոցի պահպանութեան համար 250 ռուբլու փոխարէն տալ միայն 100 ռուբլի։

Այսպէս, ուրեմն, Դպրանոցս տարէցտարի զրկուել է և շարունակում է զրկուել այն նպաստադրամներից, որոնք հոգևոր և մարմնաւոր իշխանութիւնների կողմից սահմանուած են իբրև նորա պահպանութեան միայուն աղբիւրներ։ 'Ի նկատի ունենալով վերոյիշեալները, Հոգաբարձական Խորհուրդս պարտք համարեց զեկուցանել այդ մասին Սրբազան Առաջնորդին և խնդրել, որ Նորին Գերապատուութիւնը բարեհաճի հարկադրական միջոցներ ձեռք առնել և շրջաբերական խստիւ հրաման արձակել զանցառու

երեսփոխանների անունով, որպէսզի ամէն տարի, անթերի և անխափան, փոյթ ունենան ուղարկել Դպրանոցիս պահպանութեան համար իրենց եկեղեցիներից սահմանուած տուրքը։

Դպրանոցի գործերից երևում է, որ նորա բացման օրից մինչև 1901—2 ուս. տարին Ս. Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը նպաստ տուած է եղել տարեկան 750 րուբլի։ 1901—2 ուս. տարուանից, համաձայն դպր. Հոգաբարձութեան խնդրին և Սրբազան Առաջնորդի միջնորդութեան, Ս. Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը հնարաւոր է համարել վեց տարի շարունակ տարեկան 750 ռուբլի նպաստի փոխարէն տալ 3000-ական ռուբլի։ Պայմանաւորուած վեց տարին լրանալուց յետոյ Եկ. Խորհուրդը հաղորդեց, որ 1907 թուից տրուելիք նպաստը իսպառ պիտի կարճուի և նախահաշուի մէջ մտցնուելու չէ։ Այս կարգադրութեան մասին զեկուցանելով Սրբազան Առաջնորդին, Խորհրդարանս խնդրեց անմիջապէս միջոցներ ձեռք առնել և յորդոր կարդալ Ս. Պետերբուրգի Եկ. խորհրդին, որ դա չզլանայ լցուցանելու իւր պարտքը դէպի թեմական միակ միջնակարգ ազգային կրթարանը և, եթէ այս կամ այն պատճառով անկարող է նա շարունակել 3000 ռուբլի նպաստի տուչութիւնը, որին աւելի քան երբեք կարիք ունի դպրանոցս, գէթ Հայրապետական կոնդակով սահմանուած 750 ռուբլին պարտք համարէ անխափան հասցնելու վարչութեանս։ Եւ Ս. Պետերբուրգի եկ. խորհուրդը հնարաւոր համարեց շարունակել միայն 750 ռուբլի նպաստի տուչութիւնը։

1908 թ. Մարտի 6-ին գումարուած նիստում, Հոգաբարձութիւնս՝ ՚ի նկատի ունենալով Դպրանոցի հասոյթների նուազումը, պարտք համարեց ի նորոյ դիմել Ս. Պետերբուրգի Եկ. խորհրդին, որ ըստ չափու հնարաւորութեան աւելացնէ դա մնայուն նպաստի չափը։ Այս նպատակով և Հոգաբարձութեանս յանձնարարութեամբ Ս. Պետերբուրգ ուղևորուեցան Խորհրդարանի անդամներ պ. պ. Ռէիզեան Գէորգ և Խոճայեան Կարապետ։ Այս առաքելութեան արդիւնքն եղաւ այն, որ Ս. Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը, բացի 750 ռուբլի մնայուն նպաստից, յատկացուց մի տարով միայն մի հազար ռուբլի օժանդակութիւն, որ և ստացուած է 1908—9 թ. ուս. տարուայ ընթացքում։

Ներկայ տարուայ Յունիսի 16-ին Հոգաբարձութիւնս, Սրբազան Առաջնորդի նախագահութեամբ ժողով գումարելով, վերստին խորհրդածութիւն ունեցաւ դրամական այն ճգնաժամի մասին, որի մէջ գտնվում է դպրանոցս Խալիբեան դպրոցի պարապ մնալուն պատճառով, և՝ ի նկատի ունենալով՝ որ եղած հասոյթներով իսպառ անկարելի պիտի լինի կառավարել և պահպանել դպրանոցը 1909—10 ուս. տարուայ մէջ, որոշեց ընդ ձեռն Սրբազան Առաջնորդի կրկին դիմել Ս. Պետերբուրգի եկեղեց. խորհրդին, իբրև մեր թեմի միակ կարող համայնքին, և՝ հրաւիրելով նորա լուսամիտ ուշադրութիւնը դպրանոցիս վրայ, որ կարևոր դեր ունի կատարելու հարաւային Ռուսիայում սփռուած հայ գաղթականութեան լուսաւորութեան և պահպանութեան գործում, խնդրել, որ մինչև Խալիբեան դպրոցի շէնքի վաճառման կամ վարձատուութեան խնդիրը գլուխ գալը յատկացնէր դպր. պահպանութեան համար բացի 750 ռուբլի նպաստից նաև այն 3000 ռուբլին, որ ցարդ ստացվում էր Խալիբեան դպրոցից։

Դպրանոցի եկամուտի աղբիւրները աւելացնելու և 1908—9 ուս. տարուայ բացը



ծածկելու նպատակով Խորհրդարանս, 1908 թ. յունիսի 4-ի կարգադրութեան համաձայն, դիմած էր Ն. Նախիջևանի Ս. Խաչ Վանքի վանական կառավարութեան, որ դա իւր հասոյթներից բարեհաճի յատկացնել դպրանոցիս պահպանութեան համար որև է նպաստ։ Վանական Կառավարութիւնը հնարաւոր համարեց յարգել խորհրդարանիս խնդիրը և 1908—9 ուս տարուայ համար Վանքի հասոյթներից որոշեց դպրանոցի պահպանութեան համար յատկացնել միանուագ 1200 ռուբլի նպաստ, որի հաշուին սակայն 1908—9 ուս. տար. մէջ ստացուած է միայն 350 ռուբլի. մնացած 850 ռուբլին թէև նոյնպէս ստացուած է, բայց՝ ներկայ տարուայ հաշիւները փակուած լինելուն պատճառով՝ այդ գումարը մուտք գրուած է 1909—10 ուս. տարուայ հաշուի մէջ։

Նոյն նպատակով խորհրդարանս դիմել էր նաև Նոր Նախիջևանի Եկեղեցական Հոգաբարձութեան, որ դա չմերժէ 1908—9 ուս. տարուանից Գասպար Պոպովի անուան գիշերօթիկ կամ երթևեկ սաներ պահել նաև դպրանոցի մէջ, որով թէ՝ այս վերջինս շահուած և թէ հանգուցեալի կտակաւոր աւանդութիւնը ամբողջովին գործադրուած կը լինէր։ Ի հետևումն խորհրդարանիս այս միջնորդութեան Եկ. Հոգաբարձութիւնը ևս հնարաւոր համարեց բացի Վ. Ախչիեանի, Նախկին մարդասիրական ընկերութեան և Մ. Նալբանդեանի անունով պահուող գիշերօթիկ սաներից, առաջին և երկրորդ կարգի երթևեկ սաներ ևս պահել Գ. Պոպովի անունով, որոնց ուսման վարձ 1908—9 ուս. տարուայ մէջ նոյն Հոգաբարձութիւնից ստացուել է 1135 ռուբլի։

## ՆԱԽԿԻՆ ԽԱԼԻԲԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՏԱՆ ՎԱՐՁԱՏՈՒՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՃԱՌՄԱՆ ԽՆԴԻՐԸ։

Թէոդոսիայի նախկին Խալիբեան ուսումնարանի շէնքը 1874 թուից վարձու տրուած էր Ուսուցչական ինստիտուտին։ Առաջին վեց տարին ինստիտուտը վճարել է վարձ 1500 ռուբլի, կարևոր նորոգութիւնները իւր հաշուով անելու պայմանով, իսկ յաջորդ տարիները վարձակալութեան գինը եղած է 3000 ռուբլի։ 1907 թ. յուլիսի 1-ին լրացաւ վարձակալութեան վերջին 4 տարուայ պայմանաժամը. մինչ այդ Խորհրդարանիս և Վարժապետանոցի վարչութեան միջև սկսուած էր բանակցութիւն՝ ապագայ վարձատուութեան պայմանները մշակելու և անհրաժեշտ նորոգութիւնները անելու համար. սակայն 1907 թ. յունիսի 6-ին պ. վերատեսուչը հաղորդելով, թէ ինստիտուտի ապագան անորոշ վիճակի մէջ է, և կարող է պատահել, որ այդ հաստատութիւնը, իշխանութեան կարգադրութեամբ, Թէոդոսիայից տեղափոխուի է ուրիշ քաղաք, խնդրում էր նոր պայման կապել միայն մի տարով, այսինքն մինչև 1908 թ. յուլիսի 1-ը։ Ի նկատի ունենալով, որ ինստիտուտը իւր վաղեմի վարձակալն է, և գուցէ իւր մերժումով խանգարած կ՚լինի ուսումնարանի պարապմանց կանոնաւորութիւնը—Հոգաբարձութիւնս հնարաւոր համարեց յարգել պ. վերատեսչի խնդիրը։

1908 թ. մայիսի 14-ին պ. վերատեսուչը հաղորդեց, թէ ինստիտուտը յուլիսի 1-ից տեղափոխվում է ուրիշ կայարան, ուստի և խնդրում էր լիազօրել մէկին՝ ընդունելու Խալիբեան դպրոցի շէնքը սահմանուած ժամանակին։ Շէնքը ընդունելու և համապատասխան արձանագրութիւնը ստորագրելու նպատակով խորհրդարանիս կողմից ուղևորվում է Թէոդոսիա քարտուղար պ. Յակոբ Բողդանեանը։

Այսպէս, ուրեմն, 34 տարի շարունակ վարձակալ ունենալուց յետոյ, Խալիբեան

դպրոցի շէնքը 1908 թ. յուլիսի 1-ից պարապ է մնում, որով և դպրանոցս ոչ միայն զրկվում է տարեկան 3000 ռուբլի եկամուտից, այլ և ստիպուած է լինում նորա ապահովագրութեան, հարկի հատուցման և պահապանների վարձատրութեան համար իւր հասոյթներից ևս ծախսել 1000—1100 ռուբլի տարեկան։

Հոգաբարձութիւնս ամէն կերպ հետամուտ եղաւ գտնելու նոր վարձակալ կամ այլ կերպ շահագործելու յիշեալ շինուածքը, բայց ամէն ջանք և աշխատանք ապարդիւն անցան։ Մինչդեռ Հոգաբարձութիւնս զբաղուած էր Խալիբեան դպրոցի տան ապագայ վիճակը կարգադրելու ծանր խնդրով, որի բաւարար լուծումից ոչ նուազ կախումն ունի անշուշտ դպրանոցիս նիւթական ապահովութեան գործը, հասաւ Թէոդոսիայի հայոց եկեղեցւոյ նախկին երեսփոխան պ. Զայցևի հեռագիրը, թէ կառավարութիւնը իւր պէտքերի համար կամենում է գնել Խալիբեան դպրոցի շէնքը։

'Ի նկատի ունենալով այդ հեռագիրը և ուշադրութեան առնելով այն հանգամանքը, որ ա. Խալիբեան դպրոցի շէնքը, քաղաքից դուրս գտնուելով և յատկապէս դպրոցի համար կառուցուած լինելով, շատ դժուարութեամբ վարձու պիտի արուի. բ. որ այդ շէնքը ներկայումս կարօտութիւն ունի հիմնական ու մեծածախս նորոգութեան թէ՛ ներքուստ և թէ՛ արտաքուստ, և գ. որ եթէ այս տունը պարապ մնայ, նորա պահպանութեան համար տարեկան 1000 ռուբլից աւելի ծախք պէտք է լինի, Խորհրդարանս որոշեց սկզբունքով ընդունել վաճառման անհրաժեշտութիւնը և նպատակայարմարութիւնը, եթէ միայն ձեռնտու պայմանով գնող գտնուի, ուստի և պարտք համարեց հեռագրով խնդրելու պ. Զայցևին, որ նեղութիւն յանձն առնէ ճարտարապետի միջոցով որոշելու այդ տան նիւթական արժէքը և իւր դիտողութիւնների հետ ներկայացնէ Խորհրդարանիս։ 'Ի կատարումն այս յանձնարարութեան պ. Զայցևը՝ տեղեկագրելով, թէ ճարտարապետը շինուածքի նիւթական արժէքը գնահատել է 102 հազար ռուբլի, առաջարկում էր ծախու գինը սահմանել 120 հազար ռուբլի՝ շինութեանը պատկանող հողաբաժնի հետ մէկտեղ։ Համաձայն այս ցուցմունքներին և 'ի նկատի ունենալով ընդհանրապէս տարեկան 3000 ռուբլի վարձագինը, որ մինչ այդ ստանում էր Դպրանոցս այդ կալուածքից, Խորհրդարանս հնարաւոր համարեց Խալիբ. դպրոցի և մօտ 10 հազար քառակ. սաժ. հողաբաժնի ծախու գինը յայտարարել 120 հազար ռուբլի՝ լիազօրութիւն տալով միաժամանակ պ. Զայցևին բանակցութիւն վարել այդ մասին պ. Նահանգապետի հետ։

Պ. Զայցևի այս սիրայօժար միջամտութիւնից անկախ, 1908 թ. մայիսի 4-ի Հոգաբարձ. ժողովի կարգադրութեամբ և նորա լիազօրութեամբ, Թէոդոսիա ուղևորուեցաւ Խորհրդարանի անդամ պ. Գէորգ Զուբարը՝ մանրամասն ծանօթանալու Խալիբ. դպրոցի վաճառման և յարակից խնդիրների հանգամանքներին, որպէս նաև 'ի յայտ բերելու նոյն շինութեանը պատկանող հողաբաժնի սահմանները, իսկ ապա ուղևորուել Սիմֆերոպոլ՝ անձամբ հետամուտ լինելու պ. Նահանգապետի յարուցած խնդրին։ Յունիսի սկիզբները Նախիջևան վերադառնալով պ. Զուբարը զեկուցեց, թէ ինքը ներկայացել է պ. փոխ.—Նահանգապետին, որի առաջարկութեամբ և մատուցել է տեղեկագիր Խալիբեան դպր. տան վաճառման պայմանների մասին ընդհանուր գծերով միայն, իսկ մանրամասնութիւնները խոստացել է ներկայացնել Նախիջևան վերադառնալուց և իւր ուղևորութեան մասին Հոգաբարձական Խորհրդին զեկուցանելուց յետոյ։



Համաձայն այս խոստման և Խորհրդարանիս հաճութեամբ պ. Զուբարը 1908 թ. յունիսի 8-ին ուղարկեց պ. Նահանգապետին վաճառման պայմանների մասին լրացուցիչ տեղեկագիր, որի գլխաւոր հիմունքներն են. ա. Հոգաբարձութիւնը ստանում է կառավարութիւնից 40 հազար ռուբլի առձեռն դրամ, կալուածագիրը կնքելուց յետոյ անմիջապէս. բ. մնացած 80 հազարը Հոգաբարձութիւնս պիտի ստանայ 4 տարուայ ընթացքում, 20-ական հազար ռուբլի տարին, որ պիտի հատուցանէ պետական գանձարանը ամէն տարուայ վերջին, 100-ին 6% հաշուելով։

Մինչդեռ խորհրդարանս զբաղուած էր Խալիբ. դպր. շէնքի վաճառման գործը գլուխ բերելու խնդրով, հասաւ Ս. Էջմիածնի Սինոդի 1908 թ. օգոստ. 22, թ. 2145 հրամանը, որ է՝ «զվախճանական լուծումն խնդրոյ վաճառելոյ շինութեան Խալիբեան դպրանոցի բարւոք համարելով թողուլ մինչ ցընտրութիւն և ցհաստատութիւն նորոգ Հայրապետի ազգին՝ կարճել զայս գործ»։

Ներկայումս Հոգաբարձութեանս մէջ ստացուած մասնաւոր տեղեկութիւններից երևում է, որ կառավարութիւնը՝ չափազանց թանգ համարելով նշանակուած գինը՝ խիստ հրաժարուել է Խալիբ. դպրոցի շէնքը ձեռք բերելու մտադրութիւնից, որովհետև պ. Նահանգապետի կազմած յանձնաժողովը առ առաւելն 45 հազար ռուբլի է գնահատել յիշեալ կալուածքի արժէքը։

Աւելորդ չէ համարում Հոգաբարձութիւնս աւելացնել այստեղ և այն, որ 1875 թ. ազգային լուսաւորութեան նախարարութեան կողմից ևս առաջարկութիւն է լինում նախկին հոգևոր Դպրոցի *) վարչութեանը վաճառել Խալիբեան դպրոցի տունը յիսուն հազար ռուբլի։ Դպրանոցի այն ժամանակուայ վարչութիւնը՝ ընդունելով յիշեալ առաջարկութիւնը և իւր պատճառաբանեալ կարծիքը ներկայացնելով Ս. Սինոդին, խնդրում է դորա թոյլտուութիւնը վաճառելու յիշեալ կալուածքը 75 հազարի։ Սինոդը նախ թոյլ է տալիս Դպր. Վարչութեան ընդունելու նախարարութեան այս առաջարկը՝ յանձնարարելով միևոյն ժամանակ, որ խորհրդարանը ծախու գինը սահմանէ 90 հազար ռուբլի. սակայն մէկ ամիս չանցած Սինոդը փոխում է իւր այս վճիռը և, ըստ հրամանի Նորին Ս. Օծութեան, կարգադրում է վաճառել յիշեալ տունը ոչ պակաս քան 110 հազարի։

Նախարարութիւնը, որ սկզբում առաջարկած է եղել 50 հազար, վերջը համաձայն է եղել տալ 60 հազար, իսկ ապա—նաև 75 հազար՝ յայտնելով միաժամանակ, որ 75 հազարը վերջին գինն է։ 'Ի վերջոյ Ս. Սինոդը կարգադրում է իջեցնել գինը 85 հազարի, բայց մինիստրութիւնը՝ խիստ հրաժարուելով 85 հազար տալուց՝ դադարեցնում է իւր բանակցութիւնը։

## ԴՊՐԱՆՈՑԻ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՔՍԱՆՀԻՆԳԱՄԵԱԿԸ ԵՒ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽԸ-ԼՐՏՈՒԽՄՆԵՐԸ։

1906 թ. Նոյեմբերի 8-ին լրացաւ Դպրանոցիս գոյութեան քսանհինգամեակը։ Հոգաբարձութիւնս՝ որոշած լինելով հանդիսապէս տօնել այդ նշանակալից օրը, արդէն տեսել էր պատշաճաւոր պատրաստութիւնը և, որպէսզի քաղաքիս հասարակութիւնը և ազգային ու հասարակական հաստատութիւնները դիւրութիւն ունենան մասնակցելու

*) Որ 1881 թ. վերածուեց Թեմական Դպրանոցի.

դպրոցական այս հանդէսին, հնարաւոր էր համարած յոբելինական բուն տօնը կատարել կիրակի, նոյեմբերի 12-ին։ Սակայն նոյեմբերի 10-ին դպրոցի հիւանդանոցի մէջ կնքեց իւր մահկանացուն գիշերօթիկ աշակերտ Ա. դասարանցի Լևոն Քերեստեճեանը. այդ իսկ պատճառով դպր. քսանհինգամեակի հանդիսակատարութիւնը յետաձգուեցաւ մինչև նոյեմբերի 19-ը։ Սակայն այդ օրը ևս անկարելի եղաւ յոբելինական հանդէսը կատարել, որովհետև աշակերտների մէջ այդ միջոցները խլրտումներ կային, այնպէս որ՝ ի նկատի ունենալով աշակերտների յուզուած տրամադրութիւնը և կամենալով խոյս տալ հաւանական անախորժութիւններից, Խորհրդարանս որոշեց քսանհինգամեակի հանդիսակատարութիւնը անորոշ ժամանակով յետաձգել։

Դպրանոցիս Հոգաբարձութիւնը, օգտուելով բարեպատեհ առթից, նպատակ ունէր հայ հասարակութեան լայն աջակցութեան դիմել, դպրանոցի նիւթական դրութիւնը բարւոքելու համար։ Եւ, արդարև, հասարակութիւնը և զանազան հաստատութիւններ արդէն սկսել էին պատրաստութիւններ տեսնել, արժանապէս մասնակցելու լուսաւորութեան այդ տօնին թէ դրամական նուէրներով, թէ որդեգիրներ պահելով և թէ այլ միջոցներով դպրանոցիս յոբելեանի օրը յաւերժացնելու համար, սակայն գործը մնաց առկախ՝ արդէն վերը յիշուած պատճառներով։

Տեղւոյս Բարեգործական Ընկերութիւնը դպրանոցի յոբելեանի առթիւ ուղարկել էր Հոգաբարձութեանս տրամադրութեանը իւր հրատարակութիւններից՝ 250 օրինակ Ռ. Պատկանեանի երկերի III-րդ հատորը և 50 օրինակ Մ. Նալբանդեանի երկերի երկհատորը՝ աշակերտներին ձրիապէս բաժանելու համար։ Նոյն նպատակով և նոյն առթիւ պ. Գրիգոր Զալխուշեանը ևս նուիրաբերած է իւր հեղինակած «Հայկական հարցը» գրքոյկից 300 օրինակ, իսկ պ. Միքայէլ Թումաջեանը Եկեղեցական Հոգաբարձութեան յանձնել է մի հազար ռուբլի, որպէս զի դրա տոկոսով սան պահուի դպրանոցում։

Խորհրդարանս աւելորդ չէ համարում համառօտակի մէջ բերել այստեղ աշակերտական խլրտումների և յարակից դէպքերի հանգամանքները։

Վաղամեռիկ Քերեստէճեան Լևոն աշակերտի թաղման հանդէսին, որին ներկայ էր հոգաբարձական և մանկավարժական կազմը, IV դասարանի աշակերտ Պօղոսեան Գալուստը դամբանական է խօսում եկեղեցում և՝ հանգուցեալի մահը վերագրելով դպրանոցի մէջ տիրող կարգերին ու ռեժիմին և յատկապէս գիշերօթիկների անցուցած կեանքին՝ դպրանցիս օթեանները անուանում է «ճահիճ» և այլն։

Նոյն օրը մանկավարժական ժողովը արտակարգ նիստ է գումարում, քննում է Պօղոսեան աշակերտի այդ արարքը և՝ ի նկատի ունենալով, որ դպրանոցի աշակերտութեան իրաւունք է տրուած օրինական ճանապարհով գումարումներ ունենալ և իրենց ցաւերն ու տրամադրութիւնները հասցնել դպր. վարչութեան, ուրեմն և՝ Պօղոսեանը հնար և միջոց ունէր իւր դիտողութիւնները և ցանկութիւնները հասցնել ուր հարկն է, մինչդեռ նա լաւագոյն է համարած հրապարակական կոչ անել եկեղեցւոյ մէջ՝ անախորժութիւն և բարդութիւն յառաջ բերելու նպատակով,—միաձայն որոշում է Պօղոսեան աշակերտին արձակուած համարել։ Նոյեմբերի 14-ին Հոգաբարձական խորհուրդը հաստատում է մանկ. ժողովի այս որոշումը։ Պօղոսեանի արձակման մասին եղած վճիռը IV, V և VI դասար. աշակերտների մէջ դժգոհութիւն է առաջ բերում, որ ապա փոխվում է խռովութեան. նոքա մատուցանում են Խորհրդարանիս մի բողոք, որով Պօղոսեանին արձակելու մասին հոգաբարձ. և մանկավարժական ժողովների վճիռը համարելով ապօրինի և անարդար՝ պահանջում են վերստին ընդունել նորան դպրանոց։



Ի նկատի ունենալով աշակերտների այս ընթացքը, այլ և ուշադրութեան առնելով պ. Տեսչի յայտարարութիւնը, թէ բողոքարկու աշակերտները հրաժարվում են հնազանդել դպրանոցի մէջ ցարդ գոյութիւն ունեցող կարգերին ու կանոններին և միանգամայն անտես են առնում պ. Տեսչի կարգադրութիւնները՝ խանգարելով դասերի ընթացքը, Խորհրդարանս նոյեմբերի 22-ին որոշում է IV, V և VI դասարանները փակուած համարել, նոյն դասարանների երթևեկ և գիշերօթիկ աշակերտներին արձակել, թոյլ տալով նրանց վերստին աշակերտ ընդունուելու համար խնդիր մատուցանել վարչութեան, որի համար ժամանակ տալ նրանց մինչև յունուարի 16-ը։

Իւր այս որոշումներն անելով հանդերձ Հոգաբարձութիւնս հարկաւոր համարեց անմիջապէս գումարել քաղաքիս բոլոր վեց եկեղեցիների ծխական պատգամաւորներին և դէպքի ամէն հանգամանքներն ու մանրամասնութիւնները զեկուցանել նոցա ժողովին 'ի կշռադատութիւն։ Նոյեմբերի 22-ին, 44 պատգամաւորների ներկայութեամբ, կայացաւ արտակարգ ընդհանուր ժողովը, որը ուշադրութեամբ լսեց Տեսչի օգնականի և Հոգաբարձութեան զեկուցումները, ծանօթացաւ այն արտօնութիւններին ու դիւրութիւններին, որոնք՝ համաձայն աշակերտների դեռ անցեալ տարի մատուցած խնդրագրին՝ շնորհուած էին նրանց դպրանոցիս վարչութեան կողմից. այդտեղ զեկուցուեցաւ նաև աշակերտների նոր պահանջը—աշակերտական կազմակերպութիւն ունենալու անհրաժեշտութեան մասին, որը մանկավարժական և հոգաբարձական ժողովների կողմից սակայն համարուած էին անընդունելի։ Ապա բացատրութիւններ տուին և ժողովականների հարցերին պատասխանեցին արձակուած աշակերտների կողմից ուղարկուած 8 հոգի ներկայացուցիչները։ Այս վերջինները պնդում էին, որ Պօղոսեան աշակերտը դամբանական խօսելուն համար չպիտի արձակուէր դպրանոցից, որովհետև ինչ որ նա իւր դամբանականում ասել է և դեռ պիտի ասէր, եթէ նրան չընդհատէին, միանգամայն ճշմարտութիւն է. արդարև, նոքա դպրանոցի օթեաններում ապրելը համարում են միանգամայն վնասակար իրենց առողջութեան համար, ուստի և կոչ անելով եկեղեցում հրապարակով, յոյս ունէին այդ եղանակով հրաւիրել հասարակութեան ուշադրութիւնը և նոյն իսկ նորա միջամտութիւնը, որ օթեանները փակուին։

Պատգամաւորական ժողովը՝ ուշադրութեան առնելով թէ դպր. վարչութեան զեկուցումը և թէ աշակերտական ներկայացուցիչների տուած բացատրութիւններն ու գանգատները և խնդիրը իրենց համար ըստ ամենայնի պարզաբանուած համարելով որոշեց մանկավարժական և հոգաբարձական ժողովների այս խնդրում բռնած ընթացքը համարել նպատակայարմար և արած վճիռները ճանաչել կանոնաւոր։

Դեկտեմբերի 3-ին Խորհրդարանս հնարաւոր է համարում վերաբանալ IV դասարանը և պարապմունքները շարունակել, որովհետև բաւական թուով աշակերտներ ըսկսում են յաճախել դասերը։ Դեկտ. 9-ին տեղի է ունենում մանկ. և հոգաբարձ. խառն ժողով, որը ի նկատի ունենալով, որ աշակերտները իրենց արածները համարում են սխալ և խոստանում են հնազանդուել դպրանոցի մէջ գոյութիւն ունեցող կարգերին ու կանոններին, միաձայն որոշում է ընդունել նրանց վերստին։ Մնում են չընդու-

նուած 8 հոգի, որոնք դժկամակում են իրենց արարքը սխալ համարել· 'ի վերջոյ սոքա ևս զղջանում են և ընդունվում դպրանոց. չընդունուած մնում են երեք հոգի, բացի Պօղոսեանից, որոնցից երկուսին սակայն թոյլ է տրվում իբրև ազատ ունկնդիրներ յաճախել դպրանոց և տարուայ վերջը իրենց ընկերների հետ քննութեան ենթարկուել։

## ՆՈՐ ՏԵՍՉԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ.

1906/7 ուս. տարուայ օգոստոս ամսից արդէն հրաժարուած էր իւր պաշտօնից Տեսուչ պ. Գալուստ Զարիֆեանը, և՝ դպրանոցի կանոնադրութեան համաձայն՝ Տեսչի օգնական պ. Ե. Շահազիզեանին յանձնուած էր նաև տեսչի պաշտօնակատարութիւնը, որ շարունակեց վարել մինչև 1907 թ. մայիսի 22-ը։

Տեսչական թափուր պաշտօնը ստանձնելու խնդիրներ տուած էին պ.պ. Լևոն Սարգսեան, Խաչատուր Սամուէլեան և Յովհաննէս Կոստանեան։ Սոցանից առաջինը խնդրի հետ միասին ներկայացրել էր նաև որոշ պայմաններ, որոնք համաձայն չէին Հոգաբարձութեանս մշակած և լրագրի մէջ յայտարարած պայմաններին. միւս երկուսը իրենց կողմից պայմաններ առաջարկած չէին։ Մայիսի 22-ին գումարուած նիստում Հոգաբարձութիւնս ձեռնարկեց տեսչի ընտրութեան։ Ի նկատի ունենալով, որ Լ. Սարգսեանը որոշ պայմաններով միայն կարող է ստանձնել տեսչի պաշտօնը, որոնք սակայն համաձայն չեն Հոգաբարձութեանս մշակած պայմաններին, Խորհրդարանս որոշեց նորա թեկնածութիւնը հանել մէջտեղից. քուէարկութեան չենթարկուեցան նաև միւս երկու թեկնածուները՝ իբրև ազգային դպրոցական կեանքում համեմատաբար նոր և պատասխանատու պաշտօններ չվարած անձինք։ Այնուհետև առաջարկուեցաւ դպրանոցիս վաղեմի ուսուցիչ և տեսչի պաշտօնակատար պ. Երուանդ Շահազիզեանի թեկնածութիւնը, որ և գաղտնի քուէարկութեամբ և միաձայն ընտրուեցաւ տեսուչ դպրանոցիս և նոյն տարուայ յունիսի 13-ին, թ. 1037 Հայրապետական կոնդակով հաստատուեցաւ յիշեալ պաշտօնում։

1907/8 ուս. տարուայ սկզբին Խորհրդարանս, 'ի նկատի ունենալով դպրանոցի դրամական անձուկ վիճակը, որոշեց տեսչի օգնականի պաշտօնը վերացնել, դորա փոխարէն ունենալ 4 վերակացու, որոնց և յանձնել օգնականի պարտականութիւնները, իսկ յաւելեալ աշխատանքի համար պ.պ. վերակացուներին տալ 100-ական ռուբլի վարձատրութիւն, որով նոցա ռոճիկը, մինչև օգնական հրաւիրուելը, եղաւ տարեկան 700 ռուբլի։ Բացի այս Հոգաբարձութիւնս հնարաւոր համարեց թոյլատրել վերակացուներին սակաւ քանակութեամբ դասեր ևս աւանդել դպրանոցի մէջ։

Ա. դասարանի զուգընթաց բաժինը 1909|10 ուս. տարուանից փակուելու և գիշերօթիկների թիւը համեմատաբար պակասելու պատճառով, առաջիկայ ուս. տարուայ մէջ Խորհրդարանս որոշեց ունենալ միայն երեք վերակացու՝ հարիւրական ռուբլի աւելացնելով նոցա վարձատրութիւնը, որով վերակացուների ռոճիկը կը լինի 800 ռ. տարեկան։

---

# ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ ԴՐԱՄԱԿԱՆ ԵԼՈՒՄՈՒՏՔԻ

# 1906-7, 1907-8 ԵՒ 1908-9 ՈՒՍ. ՏԱՐԻՆԵՐԻ

# ՀԱՇԻՒԸ

# ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ԴՐԱՄԱԿԱՆ ԵԼՈՒՄՈՒՏՔԻ ՊԱՏԿԵՐԸ 1906|7 ՈՒՍ. ՏԱՐ. ՄԷՋ.

## ՄՈՒՏՔ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Նախորդ ճեմարանական տարուանից մնացած էր . | | | | 1020 | 26 |
| **1. ՍՏԱՑՈՒԱԾ Է ԹՈՇԱԿԱԴՐԱՄ·** | | | | | |
| ա. ԳԻՇԵՐՕԹԻԿՆԵՐԻՑ . . . . | 9430. — | | | | |
| Եկեղեց. Հոգաբարձութիւնից՝ | | | | | |
| Վ. Ախչիեանի 5 սանի . . . . | 1500. — | | | | |
| Մարգաս. Ընկերութ. 2 սանի . . | 600. — | 11530 | — | | |
| բ. ԵՐԹԵՒԵԿՆԵՐԻՑ ա. կարգի . . . | | 860 | — | | |
| գ. ԵՐԹԵՒԵԿՆԵՐԻՑ բ. » . . | 1050. — | | | | |
| Բարեգ. Ընկերութիւնից . . . | 700. — | | | | |
| Եկեղեց. Հոգաբարձութիւնից՝ | | | | | |
| Մ. Քէլլէ-Շահինեանի 2 սանի . . | 56. — | | | | |
| Լ. Պաթրեանի 2 սանի . . . | 56. — | 1862 | — | | |
| դ. ԵՐԹԵՒԵԿՆԵՐԻՑ գ. կարգի . . . . | | 30 | — | 14282 | — |
| **2. ՍՏԱՑՈՒԱԾ ԵՆ ՏՈԿՈՍՆԵՐ·** | | | | | |
| ա. ԵԿԵՂԵՑ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԻՑ՝ | | | | | |
| Խ. Դիլաչքովի դրամագլխի 1906 թ. յուլիսի կտրոն. մնացորդը . . | 419. — | | | | |
| Խ. Դիլաչքովի դրամագլխի 1907 թ. կտրոնները . . . . | 3838. — | 4257 | — | | |
| Լ. Պաթրեանի դրամագլխի տարեկան %-ի մնացորդը . . . . . . . | | 64 | — | 4321 | — |
| **3. ՍՏԱՑՈՒԱԾ Է ՆՊԱՍՏ·** | | | | | |
| ա. Քաղաքային վարչութիւնից սահմանուած նպաստը (11 ամսուայ) . . . . . . | | | | 6303 | — |
| **4. ՍՏԱՑՈՒԱԾ Է ՎԱՐՁԱԴՐԱՄ·** | | | | | |
| ա. Կրպակների վարձակալներից . . . . | | 2877 | 49 | | |
| բ. Խալիբեան դպրոցի վարձակալից . . . | | 3000 | — | 5877 | 49 |
| Փոխադրելի . . | | | | 31803 | 75 |

## ԵԼՔ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **1. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՔ·** | | | | | |
| ա. Տեսչի օգնականին . . . | 1100. — | | | | |
| Նորան՝ միանուագ վարձատրութ. . | 300. — | | | | |
| » Տեսչի պաշտօնակատ. համար . | 900. — | 2300 | — | | |
| բ. Տարեկան ռոճիկ ուսուցիչներին և վերակացուներին . . . . . . . | | 18600 | — | | |
| գ. Տոկոսական յաւելումն ուսուցիչներին և վերակացուներին . . . . . | | 2430 | — | | |
| դ. Ռոճիկ մանկ. ժող. քարտուղարին . . . | | 60 | — | | |
| ե. » տեսչի գրագրին . . . . | | 60 | — | | |
| զ. Տարեկան կենսաթոշակ նախկին տեսուչ պ. Զաքիխեանին | | | | | |
| 1906\|7 ուս. տ. համար . . . | 1200. — | | | | |
| 1907\|8 ուս. տ. օգոստ. ամսինը . . | 100. — | 1300 | — | | |
| է. Տարեկան կենսաթոշակ նախկին ուսուցիչ պ. Գ. Խաչատրեանին . . . . . . | | 300 | — | | |
| ը. Տարեկան ռոճ. Հոգաբարձութեան քարտուղարին | | 400 | — | | |
| թ. Տարեկան ռոճ. ծախսարարին . . . . | | 310 | — | | |
| ժ. » » ծառաներին . . . . | | 1318 | 17 | 27078 | 17 |
| **2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾԱԽՔ·** | | | | | |
| ա. Դասարանական պիտոյքներ . . . . | | 451 | 26 | | |
| բ. Մատենադարանի գրքեր . . . . . | | 21 | 82 | | |
| գ. Լրագրներ և հանդէսներ բերելու . . . | | 110 | 60 | | |
| դ. Կազմարարին . . . . . | | 76 | 40 | | |
| ե. Տօնական հանդէսներ կատարելու . . . | | 104 | 41 | 764 | 49 |
| **3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱԽՔ·** | | | | | |
| ա. ՍՆՆԴԱԳԻՆ՝ միս . . . . | 1693. — | | | | |
| հաց . . . . | 1155, 59 | | | | |
| կաթ . . . . | 268. 95 | | | | |
| այլևայլք . . . | 1675 73 | 4793 | 27 | | |
| Փոխադրելի . . | | | | 27842 | 66 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| *Փոխադրուած* . . | | | | 31803 | 75 |

**5. ՍՏԱՑՈՒԱԾ Է ՎԻՃԱԿ. ՏՈՒՐՔ.**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ա. ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՑ՝ | | | | | |
| Ս. Լուսաւորիչ . . . . . | 600. — | | | | |
| Ս. Յովհաննու-Կարապետի . . . | 600. — | | | | |
| Ս. Գէորգ . . . . . | 500. — | | | | |
| Ս. Համբարձում . . . | 50. — | | | | |
| Ս. Թորոս . . . , . | 50. — | 1800 | — | | |
| բ. Ն.-ՆԱԽԻՋ. ՇՐՋԱԿԱՅ ԳԻՒՂԵՐԻ ԵԿԵՂԵՑ. | | | | | |
| Թոփտի գիւղի Ս. Սարգիս . . . | 75. — | | | | |
| Չալթր » Ս. Համբարձում . . | 75. — | | | | |
| Մեծ-Սալա » Ս. Աստուածածին . | 75. — | | | | |
| Նխիվեթա » Ս. Կարապետ . | 25. — | | | | |
| Փոքր-Սալա » Ս. Գէորգ . . . | 25. — | 275 | — | | |
| գ. ՎԻՃԱԿԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՑ. | | | | | |
| Ս. Պետերբուրգի Ս. Կատարինէ (1905/6 ուս. տար. տուրքի մնացորդը) . . | 1500. — | | | | |
| Մոսկուայի Ս. Խաչ . . . . . | 250. — | | | | |
| Սիմֆերոպոլի Ս. Աստուածածին . . | 30. — | 1780 | — | 3855 | — |

**6. ՍՏԱՑՈՒԱԾ Է ԱՊԱՌԻԿ ՎԱՐՁԱԴՐԱՄ.**

| | | | | |
|---|---|---|---|---|
| ա. Գէորգեանից՝ պետակ. կառավ. ժաման. մնացած . | 150 | — | | |
| բ. Խազխզեանից » » » » . | 299 | 34 | | |
| գ. Պետական գանձարանից՝ Խալիբեան դպրոցի 1904 և 1905 թ. վարձ . . . . . | 5633 | 06 | | |
| դ. Վոլֆսոնից » » » . | 122 | 25 | | |
| ե. Պետական գանձարանից » » » . | 95 | 23 | | |
| զ. Թերզեանից » » » . | 175 | — | | |
| է. Իոֆֆէից » » » . | 346 | — | 6820 | 88 |

| | | |
|---|---|---|
| *Փոխադրելի* . . | 42479 | 63 |



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| *Փոխադրուած* . . | | 4793 | 27 | 27842 | 66 |
| բ. ՀԱՆԴԵՐՁԱԳԻՆ—զգեստ, վերարկու և | | | | | |
| ճերմակեղէն . . | 2332. 61 | | | | |
| կօշիկ . . . | 663. — | | | | |
| կրկնակօշիկ . . | 174. — | 3170 | 56 | | |
| գ. Նորոգութիւն դպրանոցական տան և հիւանդանոցի | | 835 | 74 | | |
| դ. Վառելիք—քարածուխ և փայտ . . . | | 1072 | 90 | | |
| ե. Լուսաւորութիւն—կերոսին և մոմ . . . | | 201 | 20 | | |
| զ. Ճերմակեղէնները լուանալու . . . . | | 422 | 50 | | |
| է. Բաղնիքի վարձ . . . . . . | | 81 | 70 | | |
| ը. Խոհանոցի, սեղանատան, ննջարանի պարագաներ և իրեր . . . . . . | | 357 | 21 | | |
| թ. Դասարանական կահկարասեաց նորոգութեան . | | 37 | — | | |
| ժ. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ—դպր. տան . | 114. 25 | | | | |
| » —ֆիզիք. թանգ. | 27. 55 | 141 | 50 | | |
| ժա. Քաղաքահարկ . . . . . . | | 35 | 90 | | |
| ժբ. ԱՆԱԿՆԿԱԼ ԾԱԽՔ—պ. գանձապահին՝ | | | | | |
| Թէոդոսիա գնալ-գալու | 100. — | | | | |
| դպր. ծրագիրը տպելու | 80. — | | | | |
| Քերեստէճեան աշակերտի թաղման . . | 27. 57 | 207 | 57 | | |
| ժգ. Մանր ծախք . . . . . . | | 235 | 60 | 11592 | 65 |

| | | |
|---|---|---|
| *Փոխադրելի* . . | 39435 | 31 |

1004
15358

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922

| | | | | |
|---|---|---|---|---|
| *Փոխադրուած* . . | | | 42479 | 63 |
| **7. ՍՏԱՑՈՒԱԾ Է ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՑ.** | | | | |
| ա. Յիշատակարանների վաճառումից . . . | 24 | 25 | | |
| բ. Այբբենարանների » . . . | 23 | — | | |
| գ. Դասագրքերի » . . . | 2 | 60 | 49 | 85 |
| **8. ՍՏԱՑՈՒԱԾ Է ՑՈՒՂԱՐԿՈՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.** | | | | |
| ա. Քաջալեանի ժառանգներից . . . | 100 | — | | |
| բ. Զեռնովի » . . . . | 150 | — | | |
| գ Սարիեանի » . . . . | 150 | — | 400 | — |
| **9. ՍՏԱՑՈՒԱԾ Է ՊԱՏԱՀԱԿԱՆ ՄՈՒՏՔ.** | | | | |
| ա. Հին զգեստների և կօշիկների վաճառ. . . | 58 | 40 | | |
| բ. Ճաշի և հացի մնացորդի » . . . | 29 | 77 | | |
| գ. Գետնախնձորի » » . . . | 11 | 36 | | |
| դ. Այլևայլ հնոտիների » . . . | 22 | 50 | 122 | 03 |
| | | | 43051 | 51 |



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| *Փոխադրուած* . . | | | | 39435 | 31 |
| **4. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ԾԱԽՔ.** | | | | | |
| ա. Ռոճիկ պ. բժշկին . . . . . | | 200 | — | | |
| բ. » հիւանդապահին . . . | 215. — | | | | |
| » » 1907\|8 ուս. տ. հաշուին . | 50. — | 265 | — | | |
| գ. Դեղօրայք . . . . . . . | | 123 | 47 | 588 | 47 |
| Մնացորդ առ 1-ն օգոստոսի . . . . | | | | 3027 | 73 |
| | | | | 43051 | 51 |

## ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ԴՐԱՄԱԿԱՆ ԵԼՈՒՄՈՒՏՔԻ ՊԱՏԿԵՐԸ 1907|8 ՈՒՍ. ՏԱՐ. ՄԷՋ.

### ՄՈՒՏՔ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Նախորդ ճեմարանական տարուանից մնացած էր . | | | | 3027 | 73 |
| **1. ՍՏԱՑՈՒԱԾ Է ԹՈՇԱԿԱԴՐԱՄ.** | | | | | |
| ա. ԳԻՇԵՐՕԹԻԿՆԵՐԻՑ . . . . | 8920. — | | | | |
| Եկ. Հոգաբարձութիւնից՝ | | | | | |
| Վ. Ախչիեանի 5 սանի . . . | 1500. — | | | | |
| Մարգ. Ընկեր. 2 » . . . | 600. — | | | | |
| Մ. Նալբանդեանի 1 » . . . . | 300. — | 11320 | — | | |
| բ. ԵՐԹԵՒԵԿՆԵՐԻՑ ա. կարգի . . . . . | | 960 | — | | |
| գ. ԵՐԹԵՒԵԿՆԵՐԻՑ բ. կարգի . . | 1386. — | | | | |
| Բարեգ. Ընկերութիւնից . . . | 700. — | | | | |
| Եկ. Հոգաբարձութիւնից՝ | | | | | |
| Մ. Քելլէ-Շահինեանի 2 սանի . . | 56. — | | | | |
| Լ. Պաթրեանի » » . . | 56. — | 2198 | — | | |
| դ. ԵՐԹԵՒԵԿՆԵՐԻՑ գ. կարգի . . . | | 40 | — | 14518 | — |
| **2. ՍՏԱՑՈՒԱԾ ԵՆ ՏՈԿՈՍՆԵՐ.** | | | | | |
| ա. ԵԿ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՈՒՆԻՑ | | | | | |
| Խ. Դիլաչբովի դրամագլխի 1908 թ. կտրօնները . . . . | 3838. — | | | | |
| Լ. Պաթրեանի դրամ. % . . . | 92. — | | | | |
| Մ. Թուսուզեանի » » . . . . | 38. — | 3968 | — | | |
| բ. ԸՆԹԱՑ. ՀԱՇՈՒՈՎ ձգուած դրամ. % . | | 79 | 12 | 4047 | 12 |
| **3. ՍՏԱՑՈՒԱԾ Է ՆՊԱՍՏ.** | | | | | |
| ա. Քաղաքային վարչութիւնից սահմանուած 1907\|8 ուս. տ. նպաստը . . . . . | | | | 6876 | — |
| **4. ՍՏԱՑՈՒԱԾ Է ՎԱՐՁԱԴՐԱՄ.** | | | | | |
| ա. Կրպակների վարձակալներից . . . . | | 2738 | 13 | | |
| բ. Խալիբեան գպր. վարձակալից . . . . | | 3000 | — | 5738 | 13 |
| Փոխադրելի . . | | | | 34206 | 98 |

### ԵԼՔ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **1. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՔ.** | | | | | |
| ա. պ. Տեսչին՝ տեսչական ռոճ. . . | 1800. — | | | | |
| » բնակարանի վարձ . . | 500. — | 2300 | — | | |
| բ. Տարեկան ռոճիկ ուսուցիչներին . . . | | 14461 | 30 | | |
| գ. » » 4 վերակացուի . . . | | 2763 | 33 | | |
| դ. Տօկոսական յաւելումն ուսուցիչներին և վերակացուներին . . . . . . . | | 1878 | — | | |
| ե. Մանկ. ժողովի քարտուղարին . . . . | | 60 | — | | |
| զ. Մատենադարանապետին . . . . | | 150 | — | | |
| է. Մարմնամարզութեան ուսուցչին . . . | | 60 | — | | |
| ը. Տեսչի գրագրին . . . . . | | 180 | — | | |
| թ. Գ. Զարիֆեանին կենսաթոշակ (11 ամս.) . . | | 1100 | — | | |
| ժ. Գ. Խաչատրեանին » (8 ամս.) . . | | 200 | — | | |
| ժա. Հոգաբ. քարտուղարին . . . . . | | 400 | — | | |
| ժբ. Ծախսարարին . . . . . | | 300 | — | | |
| ժգ. Ծառաներին . . . . . . . | | 1393 | 70 | 25246 | 33 |
| **2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾԱԽՔ.** | | | | | |
| ա. Ուսումնական պիտոյքներ . . . . . | | 383 | 02 | | |
| բ. Կազմարարին . . . . . . | | 70 | 55 | | |
| գ. Լրագրներ և հանդէսներ բերելու . . . . | | 96 | 14 | 549 | 71 |
| **3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱԽՔ.** | | | | | |
| ա. ՍՆՆԴԱԳԻՆ՝ միս . . . . | 1155. — | | | | |
| հաց . . . . | 1054, 16 | | | | |
| կաթ . . . . | 286. 86 | | | | |
| այլեայլք . . . | 1994 — | 4490 | 02 | | |
| բ. ՀԱՆԴԵՐՁԱԳԻՆ՝ զգեստ և ճերմակ. . | 2130. 07 | | | | |
| կօշիկ . . | 630. 60 | | | | |
| կրկնակօշիկ . . | 161. 32 | 2926 | 99 | | |
| Փոխադրելի . . | | 7417 | 01 | 25796 | 04 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| *Փոխադրուած* . . | | | | 34206 | 98 |

### 5. ՍՏԱՑՈՒԱԾ Է ՎԻՃԱԿ. ՏՈՒՐՔ.

ա. ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՑ՝

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ս. Լուսաւորիչ . . . . . | 600. — | | | | |
| Ս. Յովհաննու-Կարապետի . . . | 600. — | | | | |
| Ս. Գէորգ . . . . . . | 500. — | | | | |
